

**5.5. Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարումը 2000թ.**

Բնակչությանը և կոմունալ-կենցաղային կարիքների համար ջերմաէներգիա մատակարարող կազմակերպություններում առկա 300 կաթսայատներից 2000թ. գործել են 22-ը, որից 14-ը՝ Երևան քաղաքում: Ամփոփ ցուցանիշներում չեն ներառվել ջերմարտադրող այն կազմակերպությունների հաշվետվային տվյալները, որոնց արտադրած ջերմային էներգիան ծախսվել է միայն արտադրական կարիքների համար: 22 կաթսայատների համակարգում գործել են 58 կաթսաներ: Աշխատող կաթսայատների գումարային հզորությունը կազմել է 1408 Գկալ/ժ (1 Գկալ=10<sup>9</sup> կալ): 2000թ. ջեռուցման ժամանակահատվածում բոլոր կաթսայատների կողմից ջերմաէներգիայի արտադրության համար օգտագործվել է 91.4 մլն. խոր. մետր գազ, այդ թվում Երևանում՝ 68.5 մլն. խոր. մետր:

Գործող ջերմային ցանցերի գումարային երկարությունը (երկխողովակային հաշվարկմամբ) կազմել է 982.1 կմ, որի 34.6%-ը փոխարինման կարիք ունի, 29.0%-ը՝ վերանորոգման: Գոլորշու ցանցերի գումարային երկարությունը կազմել է 54.5 կմ:

2000թ. ընթացքում գործող կաթսայատների կողմից արտադրվել է 1225.9 հազ.Գկալ ջերմային էներգիա, որից Երևան քաղաքում՝ 1002.9 հազ. Գկալ: Ջերմաէներգիայի ընդհանուր կորուստները կազմել են 235.6 հազ. Գկալ կամ 19.2%, Երևան քաղաքում՝ համապատասխանաբար 182.0 հազ. Գկալ և 18.1%:

**Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմաէներգիայի քանակը**

	Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմաէներգիան, Գկալ	% -ով փաստացի ստացված ջերմաէներգիայի ընդհանուր ծավալից		
		բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արտադրությանը
Ընդամենը	990331	52.1	6.3	41.6
այդ թվում՝ ք. Երևան	820882	44.8	5.4	49.8

Հանրապետության 48 քաղաքներից բնակչությանը ջերմային էներգիա է մատակարարվել Երևան, Գյումրի, Հրազդան, Աբովյան, Սևան, Ջերմուկ և Վայք քաղաքներում: Տարվա ընթացքում ջեռուցվել է 1988 բազմաբնակարան շենք և 458 բնակելի տուն: Հինգ և ավելի հարկանի ջեռուցված շենքերի քանակը կազմել է բազմաբնակարան շենքերի 82.2%-ը: Երևան քաղաքում այդ ցուցանիշը կազմել է 96.9%: Բազմաբնակարան շենքերում ջեռուցված բնակելի մակերեսը կազմել է 3004.2 հազ. քառ. մ, որից՝ 2603.3 հազ. քառ. մ-ը՝ հինգ և ավելի հարկանի շենքերում:

2000թ. հանրապետությունում գործող ջերմարտադրող և ջերմամատակարարող կազմակերպությունների արտադրական կարողությունների միջին տարեկան հաշվեկշռային արժեքը կազմել է 2998.6 մլն. դրամ: Տարեկան դրամական մուտքերը կազմել են 5674.4 մլն. դրամ: Դրանց 22.1%-ը պետական և համայնքային բյուջեներից է, 76.7%-ը՝ ջերմաէներգիայի իրացումից, մնացածն այլ բնույթի մուտքեր են: Ջերմաէներգիայի իրացումից ստացված դրամական մուտքերի 16.3%-ը ջեռուցման դիմաց բնակչությունից հավաքագրված դրամական մուտքերն են:

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ծախսերի ընդհանուր գումարը կազմել է 3719.4 մլն. դրամ: Ըստ ծախսումների առանձին հոդվածների, ծախսերի պատկերը հետևյալն է. 82.1%-ը նյութական ծախսերն են, ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 1.8%-ը, աշխատավարձի ֆոնդը կազմել է 6.5%-ը, սոցիալական ապահովագրության մասհանումները՝ 2.0%-ը:

Հանրապետությունում ջերմաէներգիայի մատակարարումից տարիների ընթացքում կուտակվել է 14896.9 մլն.դրամ պարտք, որից բնակչությունից՝ 5595.8 մլն.դրամ կամ 37.6%, իսկ 2000թ.՝ 2686.6 մլն.դրամ, որից բնակչությունից՝ 1530.3 մլն. դրամ կամ 57.0%:

Տարիների ընթացքում ջերմաէներգիայի մատակարարումից կուտակված պարտքերի 78.8%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին: 2000թ. այդ ցուցանիշը կազմել է 71.5%: